

ՍԱՀՄԱՆԱՂՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

ՅՐԱՆՏ ՆԱԶԱՐՅԱՆ

ՀՀ սահմանադրական դատարանի անդամ

Քանանարդկային արժեքներից բխող մարդու իրավունքների երաշխավորման եւ պաշտպանության վիճակը ցանկացած պետության պայմաններում լավագույն կերպով է բնորոշում, թե որքանով է տվյալ պետությունը իրավական եւ ժողովրդավարական, թե որքանով է լուծված մի կողմից մարդու եւ քաղաքացու, եւ մյուս կողմից՝ պետության սահմանադրորեն ամրագրված փոխադարձ իրավունքների ներդաշնակության խնդիրը, որքանով են պաշտպանելի այդ իրավունքները, եւ ունակ են արդյոք պետական հաստատապսան ինստիտուտներն ու մարմիններն ապահովելու մարդու եւ քաղաքացու իրավունքների իրական եւ լիարժեք պաշտպանություն, դրանով իսկ ապահովելու հասարակական հիմնական բջջի, ողջ հասարակության գոյությունը եւ բնականոն զարգացումը:

Կլասիկ իրավական տեսությունն է սկզբանե պետությունից տարանջատել է քաղաքացիական հասարակությանը, դիտարկելով դրանց որպես մշտապես անհաշտ երեւոյթներ: Պետությունը, որպես կանոն, մարմնավորում է իրապարակային իշխանությունը, իսկ հասարակությունը՝ ապաքաղաքականացված ազատությունը: Սակայն դարասկբին պետության եւ քաղաքացիական հասարակության միջեւ անտագոնիզմի տեսությունը սկսեց ճեղքվել: Կյանքի կոչվեցին ժողովրդավարական նոր կառույցներ, որոնք մարմնավորում էին ոչ թե պետության, որպես քաղաքական իշխանության իրականացման գործիքի, այլ պետության եւ անհատի անխախտ միության գաղափարը: Սկսած արդեն 20-րդ դարի 20-ական թվականներից, առաջին անգամ ծնունդ առան սահմանադրական վերահսկողություն իրականացնելու կոչված պետական մասնագիտացված ինստիտուտներ, որոնք, ի թիվս այլ լիազորությունների, կոչված են ապահովելու նաեւ մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների եւ ազատությունների անխախտելիությունն ու միասնությունը:

Անդրադառնալով սահմանադրական վերահսկողության, որպես պետափրավական գործառնության պատմությանը, նշենք, որ, չնայած իր դրսևերման բազմազանությանը, այդ վերահսկողության հիմնական խնդիրներից մեկը եղել է մնում է մարդու եւ քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը:

Մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտն իր կլասիկ դրսևերմումը ստացել է դեռես արագոնյան իրավունքում՝ 13-16-րդ դարերում, Գերմանիայում՝ սկսած 1495 թվականից, իսկ Բավարիայում նախատեսված է եղել 1808, 1818, 1919 եւ 1946 թվականների սահմանադրություններում, Շվեդիայում՝ սկսած 1809 թվականից, որտեղ սահմանադրորեն հիմնվեց մարդու իրավունքների պաշտպանի ծառայությունը: Սակայն էլ ավելի խորն էին այդ ինստիտուտի արմատները: Դեռ 1713 թվականից այդ երկրում գործուն էր Արդարադատության կանցլերի ինստիտուտը: Նշանակվելով թագավորի կողմից, կանցլերը հսկողություն էր իրականացնում դատարանների, պետական ծառայողների գործունեության նկատմամբ, ապահովելով օրենքների ճշգրիտ կատարումը: Սակայն, կանցլերն անկախ չէր եւ չէր կարող արդյունավետ իրականացնել քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը: Այլ էր մարդու իրավունքների պաշտպանի կարգավիճակը: Նա նշանակվում էր օրենսդիր մարմնի՝ Պառլամենտի կողմից եւ լիազորված էր հսկողություն իրականացնել դատարանների, պետական այլ մարմինների եւ պաշտոնատար անձանց գործունեության նկատմամբ՝ պաշտպանելով քաղաքացիների իրավունքները: Իսկ, օրինակ Շվեյցարիայում՝ մարդու իրավունքների դատափրավական պաշտպանության ինստիտուտը հիմնվել է 1874 թվականի Սահմանադրությամբ: Նիդեռլանդների Թագավորությունում մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուտը՝ Պետական խորհուրդը, հիմնվել է դեռես 1531 թվականին Շարլ 5-րդի կայսրության օրոք:

Սահմանադրական վերահսկողության միջոցով մարդու իրավունքները կարող են պաշտպանվել ինչպես դատական, այնպես էլ արտադատարանական կարգով: Վերջինիս դեպքում՝ որպես սահմանադրական **վերահսկողություն** իրականացնող սուբյեկտ (իսկ որոշ դեպքերում՝ ելնելով լիազորությունների բովանդակությունից, նաեւ՝ սահմանադրական **հսկողություն**

իրականացնող սուբյեկտ, ինչպես օրինակ, ՀՀ-ում Նախագահը, կառավարությունը) կարող է հանդես գալ պետության գլուխը, պառլամենտը (օրենսդիր մարմինը), կառավարությունը եւ այլ մարմիններ (վերջինիս դեպքում, օրինակ, Պետական խորհուրդը՝ Ֆրանսիայում): Սակայն, այդ վերահսկողության (հսկողության) օբյեկտը, ի տարբերություն դատական վերահսկողության, իրավական վեժերը չեն, այդ մարմիններն արդարադատություն չեն իրականացնում, այլ ապահովում են, այսպես կոչված, **սահմանադրական քաղաքական վերահսկողություն** (հսկողություն): Այս առումով, մարդու իրավունքների պաշտպանության գործառույթը հստակ իրավակիրառական բնույթ է ստանում հատկապես արդարադատության ոլորտում, եւ այն էլ՝ սահմանադրորեն ստեղծված եւ լիազորված հատուկ՝ սահմանադրական կամ ընդհանուր իրավագործության դատարանների կողմից իրականացվելիս: Ուստի, մարդու իրավունքների պաշտպանության տեսական եւ գործնական հիմնախնդիրներն ուսումնասիրելիս անհրաժեշտ է հստակ տարբերակել վերոհիշյալ ձեւերը, միեւնույն ժամանակ դիտարկելով դրանք որպես միասնություն, այլ կերպ՝ որպես սահմանադրական իրավունքի կարեւորագույն իմաստիտուտ: Ընդ որում, խոսելով սահմանադրական վերահսկողության միջոցով մարդու իրավունքների պաշտպանության մասին, նկատի պետք է ունենալ ոչ միայն պետական հատուկ մարմինների կողմից իրականացվող գործառույթ, այլեւ մարդու իրավունքների պաշտպանության ներպետական բարձրագույն ձեւ, քանզի այդ իրավունքները, որպես կանոն, ամրագրված են բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ներպետական ակտով՝ սահմանադրությամբ:

Սահմանադրական վերահսկողության միջոցով մարդու իրավունքների պաշտպանությունը հստակ տարբերակվում է այդ իրավունքների պաշտպանության միջազգային իրավական ձեւից, քանի որ վերջինս օժանդակ իրավական միջոց է, կիրառվում է այն դեպքում, երբ սպառված են մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության ներպետական բոլոր միջոցները: Բացի այդ, որպես կանոն, մարդու իրավունքների պաշտպանության միջազգային իրավական հսկողությունը պարտադիր իրավական հետևանքներ չի առաջացնում: Արդյունքում միայն փաստվում է խախտումը

Եւ առաջարկվում վերացնել այն:

Համառոտ քննարկենք մարդու եւ քաղաքացու սահմանադրական իրավունքների պաշտպանության դատական ձեւի մի քանի խնդիրներ: Դրանցից առաջնահերթ կարեւորությունը, ըստ իս, տրվում է սահմանադրական դատարանի (կամ համանման լիազորություններով օժտված այլ դատարանի) սահմանադրորեն ամրագրված լիազորությանը՝ քննության առնելու անձի խախտված իրավունքների վերաբերյալ դիմումը: Անձի սահմանադրական իրավունքների խախտման վերաբերյալ դիմումի, կամ որ նույնն է, սահմանադրական գանգատի ինստիտուտը ներկայումս համեմատաբար ավելի լայն տարածում ունի եվրոպական երկրներում, մասնավորապես Ռուսաստանում, ԱՊՀ մի շարք այլ պետություններում, Կիպրոսում, Մալթայում, Չեխիայում, Սլովակիայում, Յունգարիայում, Ալբանիայում, Լիխտենշտեյնում (1992թ.), Մակեդոնիայում, Խորվաթիայում, Սլովենիայում, Ավստրիայում, Շվեյցարիայում (Գերագույն դատարան), Գերմանիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում, Չարավալիայում, ինչպես նաեւ Չեռնոգորիայում՝ ֆեդերալ մակարդակով: Գերմանիայում այդ ինստիտուտը գոյություն ունի ինչպես ֆեդերալ, այնպես էլ՝ տեղական մակարդակով. Բավարիայում, Բեռլինում, Յեսենում, Սաարում:

Եվրոպայից դուրս սահմանադրական գանգատի ինստիտուտն ունի մասնակի տարածում. Դոդզստան, Մոնղոլիա, Հարավային Կորեա, Թայվան (Գերագույն դատարան), Նոր Գվինեա (Գերագույն դատարան), Սիրիա: Արաբական մյուս երկրներում սահմանադրական գանգատի ինստիտուտը ստացել է առանձնահատուկ դրսեւորում, եւ վերահսկողությունն իրականացվում է անուղղակի ձեւով, կամ որ նույնն է՝ ֆրանսիական եղանակով, որի դեպքում անհատն իրավասու չէ ուղղակիորեն դիմել սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմիններին: Աֆրիկյան մայրցամաքում անհատական դիմումներ քննելու իրավազորությունն ունեն Սուդանի, Մավրիկիայի, Սենեգալի եւ Բենինի գերագույն դատարանները, Լատինական Ամերիկայում՝ Բրազիլիայի Գերագույն դատարանը եւ Կոլումբիայի Սահմանադրական դատարանը:

Մի երկու խոսք սահմանադրական գանգատի դատաքննության գոյու-

թյուն ունեցող մոդելների եւ դրանց տեսական ընդհանրացումների վերաբերյալ:

Սահմավոր անձի սահմանադրական իրավունքների խախտման վերաբերյալ գործերի դատաքննությունը, որոշ բացառություններով, կրում է կամային բնույթ, այսինքն, սկզբունքորեն դատարանն իր նախաձեռնությամբ քննության առնել չի կարող իր իրավասությանը ենթակա այդպիսի հարց, եթե չկա դիմելու իրավունք ունեցող որեւէ սուբյեկտի կամահայտությունը՝ այսինքն դիմումը: Բավական հազվադեպ է, երբ սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինն իր նախաձեռնությամբ է իրացնում անձի սահմանադրական իրավունքի խախտման վերաբերյալ հարցի քննությունը, այսինքն՝ «էքս օֆիսո»-ի (լատ. ի պաշտոնե) կարգով: Դա նկատելի է սահմանադրական վերահսկողության արեւելաեվրոպական համակարգում եւ մասնավորապես՝ Խորվաթիայում (Խորվաթիայի Սահմանադրական դատարանի մասին օրենքի 15 հոդվածի 2-րդ կետ):

Սարգու իրավունքների պաշտպանության բնագավառում սահմանադրական վերահսկողության օբյեկտ կարող են լինել օրենքները, ենթաօրենսդրական ակտերը (այդ թվում՝ վարչական բնույթի տարաբնույթ ակտերը), դատական ակտերը, պաշտոնատար, ֆիզիկական, ինչպես նաեւ իրավաբանական գործողությունները: Թվարկված օբյեկտները հավասարապես վերահսկելի են ինչպես սահմանադրական վերահսկողության կենտրոնացված (այսինքն, սահմանադրական վերահսկողություն իրականացնող հատուկ դատարաններ ունեցող) այնպես էլ ապակենտրոն համակարգ ունեցող երկրներում:

Անդրադառնալով ապակենտրոն համակարգում անձի իրավունքների եւ ազատությունների դատաիրավական պաշտպանության առանձնահատկություններին:

Ապակենտրոն կամ ամերիկյան համակարգ ունեցող երկրներում (օր. ԱՄՆ, Բարբադոս, Գվինեա, Յամայկա, Իսլանդիա, Սեծ Բրիտանիա, Իռլանդիա, Նիդեռլանդներ, Դանիա, Շվեդիա, Նորվեգիա, Ֆինլանդիա, Հունաստան, Ճապոնիա, Ավստրալիա, Տրինիդադ եւ Տոբագո եւ այլն) անձի իրավունքների պաշտպանության բնագավառում սահմանադրական վերահս-

կողությունն իրականացվում է ընդհանուր իրավագորության դատարանների միջոցով: Գոյություն ունի այդ գործառույթի իրականացման բազմազանություն: Քննարկենք դրանցից առավել տարածված ձևերը:

1. «Հաբես կորպուս», լատինական ծագում ունեցող բառակապակցություն, որը թարգմանաբար նշանակում է՝ «ունեցիր քո մարմինը»: Որպես անձի իրավունքների պաշտպանության միջոց կիրառվել է դեռևս միջնադարյան Անգլիայում, իսկ ներկայումս ապակենտրոն դատական համակարգ ունեցող երկրներում անձին կալանավորելու (ազատագրելու) օրինակաճությունը ստուգելու հիմնական ձևն է, որի դեպքում դատաքննությունը տարվում է արագ, պարզ եւ հրապարակային: Այն իր տարածումն է գտել ԱՄՆ-ում, Կանդայում, Մեքսիկայում, Կոլումբիայում, Կոստա Ռիկայում, Դոմինիկյան Հանրապետությունում, Սալվադորում, Գվատեմալայում, Հոնդուրասում, Կուբայում, Արգենտինայում, Բրազիլիայում, Էկվադորում, Նիկարագուայում, Պանամայում, Պարագվայում, Պերույում, Բոլիվիայում, Չիլիում, Ուրուգվայում, Վենեսուելայում, ինչպես նաև Արգենտինայի հետեյալ գավառներում. Չակոյում, Նիքվինում, Ֆորմոսայում, աֆրիկյան երկրներից՝ Սիերա Լիոնեյում, Գանայում, Նիգերիայում, Ուգանդայում, Քենիայում, Տանզանիայում, Մալավիում, Մավրիտիուսում, Չամբիայում, Չիմբաբվեյում, Բոտսվանայում, Լեսոտոում, Սվազիում, ասիական երկրներից՝ Պակիստանում, Հնդկաստանում, Նեպալում, Շրի Լանկայում, Բանգլադեշում, Սինգապուրում, Մալազիայում, Ինդոնեզիայում, Ֆիլիպիններում, Թայվանում եւ Հոնկոնգում:

Անձի սահմանադրական իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության հաջորդ ձևը ապակենտրոն դատական համակարգ ունեցող երկրներում **«Հաբես դատա»**-ն է, որը **«Հաբես կորպուս»**-ի ենթաձևն է եւ գործողության մեջ է դրվել Բրազիլիայի 1988 թվականի Սահմանադրությամբ: Այն կոչված է ապահովելու անձին վերաբերող տեղեկատվության անձեռնմխելիությունը:

Մյուս ձևը **«Վրիթ օֆ մանդամուս»**-ն է, որի դեպքում, վերադաս դատարանն իր կարգադրությամբ վերացնում է անձի նկատմամբ ստորադաս դատարանի կայացրած հակասահմանադրական որոշումը, այսինքն ուղղում է

րույլ տրված դատական սխալը եւ վերականգնում անձի խախտված իրավունքները:

Անձի իրավունքները պաշտպանվում են նաեւ «**Վրիթ օֆ փրոհիբիշն**»-ի միջոցով, որի դեպքում վերադաս դատարանն իր կնարգադրությամբ արգելում է ստորադաս դատարանին անձի նկատմամբ կատարելու որոշակի գործողություններ կամ՝ քննություն՝ ստանձնելով դրանց կատարումը, եթե ակնհայտ է անձի նկատմամբ հակասահմանադրական որոշման ընդունման վտանգը:

Հաջորդ ձեւը «**Վրիթ օֆ սրթիորարի**»-ն է, որի դեպքում վերադաս դատարանն իր կարգադրությամբ ստորադաս դատարանից վերցնում է գործն ամբողջությամբ եւ ինքնուրույն կայացնում որոշում: Իսկ «**Քոու վարանքո**»-ի դեպքում ստուգվում է քաղաքացու նկատմամբ վիճարկվող ակտ հրապարակած անձի՝ որոշակի պաշտոն գրավելու, լիազորություն ունենալու օրինականությունը (սահմանադրականությունը): «**Ռեսպոնդիդ սուփենրիո**»-ի դեպքում հատուցվում է պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հակասահմանադրական գործողությամբ կամ իրավական ակտի հետեւանքով անձին պատճառված վնասը: Քաղաքացու խախտված իրավունքների վերականգնման այս մոդելը կիրառվում է ԱՄՆ-ում եւ Թայվանում:

Անձի իրավունքների պաշտպանության առանձնահատուկ ձեւ է այսպես կոչված «**Ամփարո**»-ն, որը տարածված ձեւ է իսպանական իրավական համակարգի երկրներում եւ կոչված է պաշտպանելու անձի սահմանադրական իրավունքները պետական կառավարման ոլորտի ցանկացած մակարդակի ակտից: Որպես կանոն, այդ գործառույթն իրականացվում է գերագույն դատական մարմինների կողմից, որի նպատակն է նախապես վերականգնել անձի խախտված իրավունքը: «**Ամփարո**»-ն արագ ընթացակարգ է, որի դասական երկիրը Սեքսիկան է: Այդ ընթացակարգով են վերականգնվում անձի խախտված սահմանադրական իրավունքները Կենտրոնական եւ Հարավային Ամերիկայի շատ երկրներում (Գվատեմալա, Սալվադոր, Նիկարագուա, Կոստա Ռիկա, Հոնդուրաս, Պանամա, Կոլումբիա, Կուբա, Հայիթի, Ռոմինիկյան Հանրապետություն, Էկվադոր, Պերու, Բոլիվիա, Պարագվայ, Արգենտինա, Ուրուգվայ, Վենեսուելա, Սենչելյան կղզիներ):

Մարդու իրավունքների պաշտպանության առանձնահատուկ իրավակա միջոցներ են կյանքի կոչված Բրազիլիայի 1988 թվականի Սահմանադրությանը, մասնավորապես, այսպես կոչված «**մանդադո դե սիզուրանս**» իրավապաշտպանական ձեւը, որը կիրառվում է այն դեպքերում, երբ անձ իրավունքների դատական պաշտպանության նպատակով չի կարող կիրառվել «Չաբեաս կորպուս»-ը, եւ երբ օրենսդիր մարմինն այս կամ այն պատճառով չի կարող իրականացնել այդ իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Այս պարագայում երկրի գերագույն դատարանի բացառիկ իրավասությունն է վերականգնել անձի խախտված իրավունքները:

Սահմանադրական գանգատի ինստիտուտի գործադրման դեպքում անհատը սովորաբար իր իրավունքն իրացնում է առանց որեւէ սահմանափակման, բացառությամբ Սլովենիայի եւ Չունգարիայի, որտեղ չի թույլատրվում դիմելու իրավունքն իրացնել հասարակական դիրքի օգտագործմամբ: Իսկ Իսրայելում անհատի սահմանադրական իրավունքների պաշտպանության այս ձեւն ընդունված է մի առանձնահատկությամբ, ըստ որի, անձի՝ դատարան դիմելու իրավունքն իր ցանկությամբ որոշում է դատարանը: Ճապոնիայում անհատն իրավասու է իր խախտված սահմանադրական իրավունքների պաշտպանությունը հայցել միայն ընտրությունների հետ կապված վեճերով, ինչպես դա տեղի ունի Չայաստանում, իսկ Իրանում՝ Վարչական դատարանում քննվող հարցերով:

Անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության առանձնահատուկ ձեւ է անուղղակի պաշտպանությունը, երբ քաղաքացին իրավասու չէ ուղղակիորեն դիմել սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմնին: այդպիսի համակարգերում անհատի իրավունքների պաշտպանությունն իրականացվում է վերացական վերահսկողությամբ, ինչպես դա տեղի ունի Լեհաստանում (ի դեպ, այդ երկրում ներկայումս աշխատանքներ են տարվում ընդունվելիք նոր սահմանադրության շրջանակներում էականորեն ընդարձակելու սահմանադրական դատարանի լիազորությունները, այդ թվում իրավունք վերապահել՝ քննելու քաղաքացիների սահմանադրական գանգատները): Վերացական վերահսկողությամբ են պաշտպանվում քաղաքացիների իրավունքները նաեւ Բելառուսում, որտեղ Սահմանադրա-

կան դատարանի մասին 1994 թ. մարտի 30-ի օրենքի 5 հոդվածին համապատասխան, այդ երկրում ըստ հայեցողության սահմանադրական վերահսկողության օբյեկտ կարող են լինել պետական ցանկացած մարմնի, այդ թվում՝ Գերագույն դատարանի, Գերագույն տնտեսական դատարանի, գլխավոր դատախազի նորմատիվ նշանակության բոլոր ակտերը: Անձի իրավունքները սահմանադրական վերացական վերահսկողությամբ են պաշտպանվում նաև Բուլղարիայում, Իտալիայում, Բելգիայում եւ Կամբոջիայում: Վերահսկողության այս ձեւն, ըստ էության, հաստատագրված է նաև ԳՅ Սահմանադրությամբ, քանի որ քաղաքացին նաև անուղղակի հնարավորություն ունի ԳՅ Նախագահի, Ազգային Ժողովի պատգամավորների առևձայգ մեկ երրորդի միջոցով վիճարկելու իրավական ակտի (օրենքների, ԳՅ Նախագահի հրամանագրերի կամ կարգադրությունների, կառավարության կամ վարչապետի որոշումների) սահմանադրականությունը:

Գոյություն ունի նաև անձի իրավունքների պաշտպանության նախնական վերացական ձեւ, որը կիրառվում է ֆրանսիայում: Այն, իր առանձնահատկությամբ հանդերձ, ունի նաև նախականիչ նշանակություն, քանի որ նվազագույնի է հասցնում մարդու սահմանադրական իրավունքները խախտող իրավական ակտի գործադրման հնարավորությունը:

Իհարկե, մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում սահմանադրական վերահսկողության թվարկված ձեւերը սպառիչ չեն եւ ունեն բնորոշ առանձնահատկություններ ամեն մի երկրում: Դրանք խիստ բազմազան են, նաև՝ կախված վիճարկվող ակտի կամ գործողության բնույթից, ակտ հրատարակած սուբյեկտից եւ նույնիսկ՝ պատճառահետեւանքային կապից: Վերջինն իր յուրահատուկ դրսեւորումն է ստացել Միացյալ Նահանգներում: Այստեղ ակնհայտ հակասահմանադրական իրավական ակտը կարող է գործել այնքան ժամանակ, քանի դեռ դատարանում չի ապացուցվել որա կիրառման հետեւանքով անձի սահմանադրական իրավունքների խախտման փաստը: Այսպես, օրինակ, ԱՄՆ Սահմանադրության 14-րդ լրացումը, որը վավերացվել է դեռևս 1868 թվականի հուլիսի 9-ին, միանշանակ արգելում է նահանգներին ընդունել Միացյալ Նահանգների քաղաքացիների իրավունքները սահմանափակող որևէ օրենք: Սակայն, առ այսօր թվով

16 նահանգներում գործում են ակնհայտ հակասահմանադրական այնպիսի օրենքներ, որոնք արգելում են քրեորեն պատժելի են համարում սպիտակամորթ եւ սեւամորթ քաղաքացիների միջեւ ամուսնությունը, եւ դա այն դեպքում, երբ դեռեւս 1967 թվականի իր որոշմամբ ԱՄՆ Գերագույն դատարանը «Լոլիմզը Վիրջինիայի դեմ» գործով, հակասահմանադրական է ճանաչել Վիրջինիա նահանգի օրենքը՝ խառնամուսնությունը արգելելու վերաբերյալ: Այսինքն, ԱՄՆ-ում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում դատական պրակտիկան հստակ եւ միանշանակ կողմնորոշված է քննության առնել ոչ թե հակասահմանադրական իրավական ակտի գոյության փաստն ընդհանրապես, այլ այդպիսի ակտի գործադրման հետեւանքով անձի սահմանադրական իրավունքների խախտման փաստը՝ մասնավորապես:

Տեսական եւ գործնական կարելություն ու հետաքրքրություն են ներկայացնում նաեւ մարդու սահմանադրական իրավունքների դատական պաշտպանության ընթացակարգի հարցերը: Դրանցից հարկ եմ համարում առանձնացնել առավել կարելուները: Նախ, սահմանադրական գանգատի իրավունքի մասին:

Որպես կանոն, այդպիսի իրավունք ունեն սահմանադրական իրավունքներ ունեցող անձինք: Այլ հարց է, թե տարածվում է այդ իրավունքը օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց նկատմամբ: Յուրաքանչյուր դեպքում այդ հարցը կարգավորվում է տվյալ պետության սահմանադրությամբ կամ ընթացիկ օրենսդրությամբ: Առանձնահատուկ է լուծված անձի՝ իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի իրացման հարցը տարբեր երկրներում: Օրինակ, Ռումինիայի գործող Սահմանադրության 21 հոդվածում նախատեսված է իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության անձի իրավունքը: Սակայն, նույն Սահմանադրությամբ նախատեսված չէ սահմանադրական գանգատի իմստիտուտը: Անձի սահմանադրական իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության հարցը տրամազծորեն հակառակ կերպ է լուծված Սլովակիայի Սահմանադրությամբ, որի համաձայն անձն այդ իրավունքն իրացնում է նա-

և այդ երկրի Սահմանադրական դատարանում:

Անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը սահմանադրական վերահսկողություն իրականացնող դատական մարմիններում կարող է իրականացվել ոչ միայն սահմանադրական զանգատի ընթացակարգով, այլև իրավական ակտերի, միջազգային պայմանագրերում անբարձրված պարտավորությունների սահմանադրականությունը որոշելու, իշխանության տարբեր ճյուղերի միջև առաջացած վեճերը լուծելու եւ այլ ընթացակարգերով, երբ շոշափվում են տվյալ պետության քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը: Թվարկված դեպքերում, սահմանադրական վերահսկողություն իրականացնող դատական մարմին կարող են դիմել նաեւ պետության գլուխը, օրենսդիր իշխանության մարմինը կամ վերջինիս որոշակի թվով պատգամավորներ, կառավարությունը եւ այլն:

Իրավական ինչպիսի՞ ակտեր կամ գործողություններ կարող են վիճարկվել սահմանադրական զանգատում: Ընդհանուր տեսական մոտեցումն ենթադրում է, որ, ըստ էության, պետք է վիճարկվի իրավական ցանկացած ակտ եւ պաշտոնատար անձի գործողություն, եթե դրանցով խախտվել է անձի սահմանադրական որեւէ իրավունք: Այնուհանդերձ իրավունքի տարբեր հասնակարգերում եւ նույնիսկ միեւնույն համակարգի տարբեր երկրներում այդ հարցը խիստ տարաբնույթ լուծում է ստացել: Օրինակ, Շվեյցարիայում սահմանադրական զանգատի կարգով կարող են վիճարկվել միայն կանտոնների, այսինքն՝ իշխանության տեղական մարմինների, իրավական ակտերը, Ավստրիայի Սահմանադրական դատարանում անձը կարող է վիճարկել միայն այն օրենքները, ենթաօրենսդրական ակտերն ու միջազգային պայմանագրերը, որոնցում ուղղակիորեն պարունակվում են հակասահմանադրական նորմեր: Այս դեպքում, իրավակիրառական պրակտիկան քննության չի առնվում: Իսպանիայում օրենքից բացի կարող է վիճարկվել ցանկացած իրավական ակտ, Բելգիայում՝ օրենքները, դեկրետները (ենթաօրենսդրական ակտեր), Գոլանդիայում՝ միայն օրենսդրական, ինչպես նաեւ ենթաօրենսդրական ակտերը եւ տեղական ինքնակարավառման մարմինների ակտերը:

Ինչ վերաբերում է պաշտոնատար անձանց գործողությունների սահմա-

նադրականության վիճարկմանը, ապա, եթե Միացյալ Նահանգների ցանկացած դատարանում անձը կարող է վիճարկել ոչ միայն ցանկացած իրավական ակտի, այլև պաշտոնատար անձի գործողության սահմանադրականությունը, ապա, օրինակ, Գերմանիայում պաշտոնատար անձանց գործողությունները սահմանադրականությունը ֆեդերալ մակարդակով չի վիճարկվում:

Տեսական եւ գործնական կարելություն ներկայացնող հարց է նաեւ սահմանադրական զանգատ ներկայացնելու անձի իրավունքի ծագման պահը: Որպես կանոն, անձն իր իրավունքների պաշտպանության հարցով սահմանադրական վերահսկողություն իրականացնող դատական մարմնին պետք է դիմի այն դեպքում, երբ սպառված են իրավապաշտպանության ներպետական բոլոր միջոցները: Այստեղ կարելորագույն խնդիրներից մեկը, մի կողմից՝ ընդհանուր, հատուկ իրավագործության, մյուս կողմից սահմանադրական վերահսկողություն իրականացնող դատարանների միջև լիազորությունների հստակ տարանջատումն է, որն իր կարգավորումն է ստացել պետությունների սահմանադրություններով եւ օրենքներով: Սակայն, ելնելով իրավախախտման կոնկրետ փաստից, թերեւս հիմնավոր է նաեւ այն մոտեցումը, որի համաձայն սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինն, ելնելով պետական եւ հասարակական կարելության աստիճանից, ինքնուրույն որոշի տվյալ զանգատի քննության հարցը նաեւ մինչեւ իրավապաշտպանության բոլոր հնարավոր միջոցների սպառումը: Այստեղ առանձնապես կարելոր է նշել, որ սահմանադրական զանգատը քննելիս, սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինը որոշում է ոչ թե վիճարկվող ակտի օրինականությունն ընդհանրապես, այլ՝ դրա սահմանադրականությունը: Չնայած, սահմանադրական վերահսկողությունը կլիներ շատ ավելի գործուն եւ արդյունավետ, եթե այն իրականացնող մարմինը հետամուտ լիներ զանգատի քննման ընթացքում բացահայտված այլ օրինախախտումները վերացնելու ուղղությամբ՝ առանց կրկնօրինակելու, իհարկե, արդարադատություն իրականացնող կամ իրավապահ այլ մարմինների լիազորությունները: Ի վերջո, եւ՝ սահմանադրական, եւ՝ ընդհանուր արդարադատական գործառույթ իրականացնող, եւ թե՛ իրավապահ

մյուս մարմինների գործունեության ընդհանուր եւ վերջնական նպատակը ցանկացած երկրում՝ օրինականության հաստատումն է:

Անձի սահմանադրական իրավունքների եւ ազատությունների դատական պաշտպանության արդյունավետությունը նշանակալիորեն կախված է նաեւ սահմանադրական գանգատ տալու վաղեմության ժամկետներից, քանի որ, ինչպես ընդհանուր, այնպես էլ սահմանադրական արդարադատության գործառույթն իրականացվում է նաեւ փաստական հանգամանքների ապացուցողական նշանակությունը որոշելու եւ գնահատելու միջոցով, որի դեպքում ժամանակի գործոնն ունի վճռորոշ նշանակություն:

Վաղեմության ժամկետներ են նախատեսված գրեթե բոլոր այն երկրներում, որտեղ նախատեսված է սահմանադրական գանգատի ինստիտուտը: Գերմանիայի Սահմանադրական դատարանի մասին օրենքի 93 հոդվածին համապատասխան, սահմանադրական գանգատ տալու անձի իրավունքի իրացման ընդհանուր ժամկետը մեկ ամիս է, սկսած այն օրվանից, երբ խախտվել է անձի սահմանադրական իրավունքը, իսկ օրենքների սահմանադրականության վիճարկման հարցով՝ մեկ տարի: Իսպանիայում ընդհանուր իրավագործության դատարանների որոշումները Սահմանադրական դատարանում անձը կարող է գանգատարկել այդպիսի որոշման կայացումից 20 օրվա ընթացքում, իսկ իրավական ակտերի սահմանադրականության հարցերով՝ 3 ամսվա ընթացքում (Սահմանադրական դատարանի մասին օրենքի 44 հոդված):

Սահմանադրական վերահսկողության համակարգում անձի իրավունքների պաշտպանության արդյունավետության չափանիշ է նաեւ մինչեւ գործի քննության ավարտը վիճարկվող իրավական ակտի գործողության կասեցման ինստիտուտի գործադրման հնարավորությունը: Որպես կանոն, սահմանադրական գանգատն ինքնին չի կասեցնում վիճարկվող ակտի գործողությունը: Սակայն, ելնելով այն բացառիկ հանգամանքից, որ անձի սահմանադրական իրավունքի խախտման փաստը ներպետական բոլոր միջոցներով քննարկվել եւ դեռեւս սպառնիչ լուծում չի ստացել, թերեւս նպատակահարմար կլիներ իրավունք վերապահել սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմնին որոշ դեպքերում կասեցնել վիճարկվող

ակտի հետագա գործողությունը՝ մինչեւ դրա սահմանադրականության հարցի վերջնական լուծումը, ինչպես դա տեղի ունի, օրինակ ԱՄՆ-ում:

Քննության առնելով սահմանադրական գանգատը, սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինն արդյունքում կայացնում է վերջնական որոշում՝ սահմանադրական կամ հակասահմանադրական ճանաչելով վիճարկվող իրավական ակտը (կամ դրա առանձին դրույթներ) կամ պաշտոնատար անձի գործողությունը՝ փոխարենը ոչ թե կարգավորելով տվյալ իրավահարաբերությունը, կամ իրականացնելով նորմաստեղծ գործունեություն, այլ նշելով հակասահմանադրական ակտ հրատարակած մարմնի կամ հակասահմանադրական գործողություն կատարած պաշտոնատար անձի կողմից սահմանադրական նորմը ճշգրիտ կիրառելու անհրաժեշտության մասին: Այսպես, օրինակ, Լեհաստանի Սահմանադրական դատարանի մասին 1985 թվականի ապրիլի 29-ի օրենքի 6 հոդվածում նախատեսված է դատարանի լիազորությունը՝ այդ երկրի պառլամենտին՝ Սեյմին, ներկայացնելու իր դիտողություններն ու նկատառումները հակասահմանադրական ակտի վերաբերյալ, որը սակայն կարող է մերժվել Սեյմի կողմից ձայների առնվազն 2/3-ով:

Ոչ բոլոր երկրներում է միատեսակ գործադրվում ժամանակի, տարածության մեջ եւ անձանց նկատմամբ սահմանադրական գանգատի բավարարման վերաբերյալ որոշման կիրառման հարցը: Ընդհանուր առմամբ, միանշանակ է գործադրվում այդ որոշման՝ պարտադիր կատարման ենթակա լինելու սկզբունքը: Սակայն մի դեպքում, օրինակ, Ավստրիայում, խոսք է գնում հակասահմանադրական ակտի **վերացման**, իսկ որոշ դեպքերում, օրինակ, Գերմանիայում, Իսպանիայում, այդ ակտը **անվավեր** ճանաչելու մասին: Այսինքն, ցանկացած դեպքում, սահմանադրական գանգատը բավարարելու վերաբերյալ որոշման կայացման պահից արգելվում է հակասահմանադրական ակտ հրատարակած մարմնին կիրառելու այն, իսկ հակասահմանադրական գործողություն կատարած անձին (պաշտոնատար կամ իրավաբանական անձ)՝ շարունակելու այդ գործողության կատարումը:

Բազմազան է մոտեցումը նաեւ գանգատը բավարարելու վերաբերյալ որոշմանը ներգործության հետադարձ ուժ տալու կամ չտալու հարցում:

Այստեղ կան նաեւ իրավական նորմերին հետադարձ ուժ չտալու հանրահայտ իրավատեսական սկզբունքի շեղումներ, ինչպես դա տեղի ունի Ավստրիայում՝ հատկապես 1976 թվականից սկսած, երբ էականորեն ընդարձակվեցին Սահմանադրական դատարանի լիազորությունները, ինչպես նաեւ որոշ դեպքերում՝ Գերմանիայում:

Սահմանադրական գանգատի ինստիտուտի վերը քննարկված տեսական եւ գործնական խնդիրների շրջանակն սպառնիչ չէ: Այն ունի բազմաթիվ հիմնահարցեր, որոնք մանրակրկիտ վերլուծության եւ հետագա քննարկման կարիք ունեն: Սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմնին դիմելու անձի իրավունքը սահմանադրական իրավունքի արդի գիտության կարեւորագույն ինստիտուտներից է եւ ընդունված է պետությունների ճնշող մեծամասնության կողմից: Ուստի, կարծում ենք, որ այդ ինստիտուտը, որն իր անուղղակի ամրագրումն է ստացել նաեւ Զայաստանի Զանրապետության Սահմանադրության 38 հոդվածի երկրորդ մասում, ունի հետագա հստակ նշմարելի միտումներ, հատկապես՝ իրավական եւ ժողովրդավարական ուղի բռնած նորանկախ պետություններում: